ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

2022թ. հոկտեմբերի 21-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի 10-րդ Բ դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Արևիկ Մուրադյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Էքսկուրսիայի կազմակերպման հարցը:
2. Ընթացիկ հարցեր/ հերթապահություն, կարգապահություն/:

1.Լսեցին.- Էքսկուրսիայի կազմակերպման հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Արևիկ Մուրադյանը նշելով, որ վերջին շրջանում աշակերտներն անընդհատ հանդես են եկել էքսկուրսիա կազմակերպելու առաջարկներով: Նա առաջարկեց էքսկուրսիա կազմակերպել դեպի Երևան՝ այցելելով Հայաստանի պատմության թանգարան, Մոսկվա կինոթատրոն և զբոսանել մայրաքաղաքում: Բոլոր ծնողները հավանություն տվեցին առաջարկին: Ծնողներից Ազիզյան Սաթենիկը նշեց, որ նախապես հետաքրքրվել է տոմսերի արժեքներով և հայտնի է, որ կինոթատրոնի տոմսն արժի 1000 դրամ: Տրանսպորտի համար 1000-ական դրամ և սննդի կազմակերպման համար 3000 դրամ: դասղեկ Արևիկ Մուրադյանը նշեց, որ թանգարանի տոմսերը աբոնոմենտային անվճար տոմսեր են: Բոլոր ներկա ծնողները հավանություն տվեցին առաջարկին:

Որոշեցին.- Հավաքել 5000 դրամ և այդ գումարի մեջ տեղավորել բոլոր ծախսերը:

1000- տոմս
1000/տրանսպորտ/
3000 /սնունդ/

Գումարը կհավաքի ծնողական խորհրդի նախագահը և վերջում հաշվետվություն կներկայացնի կատարված ծախսերի վերաբերյալ:

2. Լսեցին. - Ընթացիկ հարցեր/ հերթապահություն, կարգապահություն/:

Ելույթ ունեցավ դասղեկը՝ ներկայացնելով երեխաների սանիտարական վիճակը: Նա հրահանգեց, որպեսզի ծնողներն ուշադիր լինեն երեխաների գրենական պիտույքների, համազգեստների և հագախումների նկատմամբ: Դասարանում կան կարգապահական խնդիրներ, հիմնականում տղաների պահվածքի հետ կապված՝ որոշ աշակերտներ հաճախակի ուշանում են դասերից, անհարգալից վերաբերմունք ունեն ուսուցիչների նկատմամբ: Ծնողները պետք է պահեն ծնող- դասղեկ-աշակերտ կապը և անհրաժեշտության դեպքում այցելեն դպրոց իրենց երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով:

Որոշեցին.-Առավել ուշադիր և հետևողական լինել, որ աշակերտները դպրոց հաճախեն աշակերտին վայել կեցվածքով, լինեն կարգապահ և դասերին միշտ պատրաստ:

Ծնողական խորհրդի նախագահ՝ Սաթենիկ Ազիզյան
Քարտուղար՝ Տաթևիկ Աբրահամյան